636
Ч-39

40536
24 SEP 2010

Պրոլետարներ բոլոր յերկրներին միացեք

ՁՈՒ-ՎԵՏՊԱՐՏԱԴԻՐ
ԿԱՆՈՆՆԵՐ

Հ.Մ.Ս.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿ. Ս. Ս. Հ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄԱԼԵԶՎԱԿԱՆ ՖՈՆԴ
ՊԱՏՄԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՍ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՎԵԴՈՒ ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
15-ՀՈՒՆԻՍԻ 1936 Թ.

636
Ա-39

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՎԵԴՈՒ ՀՈՂԲԱԺՆԻ

Վեդի Շրջգործկոմի Տպարան Գ. Լ. Ո. № Տիրաժ 250 1936 Թ.

635.12
Ա-35
03 AUG 2013
21269

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՄԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼ ՑԵՎ ԳՈՄԵՐԸ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ԴԱՍԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1) Կոլխոզ անասնապահական ապրանքային ֆերմաներում գոմաշինարարության տեղերի ընտրությանը և այլ շենքերի դասավորումը կատարվում է հողաժնի կողմից ու նրա թույլատվությամբ (Զոոտեխնիկի, Անասնաբուժի և Շին տեխնիկի հայեցողությամբ։)

2) Ստիպվ արգելվում է անասնապահական ֆերմայի անասունների և ընդհանրապես բոլոր գոմերի սահմաններում կատարել այլ շինարարություն։ որոնք առնչություն չունեն անասնապահության հետ։

3) Անասունների մսուրային շրջանն նախապատրաստելու նը. պատակով ավարտել բոլոր կիսավարտ գոմերը. նույպես վերանորոգել, ախտահանել և սպիտակեցնել բոլոր գոմերը (կովանոցները, վոչխարանոցները և այլն), վոչ ուշ մինչև հոկտեմբերի 25—ը։

4) Հորթանոցները և ծննդաբանները պետք է կառուցել և դասավորել այն հաշվով, որ հնարավոր լինի մշտական 12 աստիճան ջերմության պաշտպանվի, հակառակ դեպքում արհեստական միջոցներով տաքացնել։

5) Բոլոր գոմերը ապահովել մսուրներով. ջրամբարներով (ջրհորերով) և բոլոր խոշոր յեղջյուրավոր անասուններին ու ձիերին ապահովել թոկերով, իսկ ձիերին նոխտաներով.

6) Անասուններին լրիվ ջրով ապահովելու նպատակով բոլոր գոմերում պատրաստել ջրամբարներ, (ջրհորներ), խոնավությունից պաշտպանվելու համար, ջրհորները ծածկել հատուկ սալաքարերով և աշխատել ջրամբարները և ջրհորները զերծ պահել բոլոր կեղտոտություններից։

7) Բոլոր գոմերը ապահովել ցամքարով (ծղնոտ, փեին և այլն)։

8) Բոլոր խոշոր յեղջյուրավոր անասունների և ձիերի գլխավերևին գրել նրա տարիքը, անունը, կենդանի քաշը և բնավորությունը, իսկ կովերին ու գամբիկներին ավելացնել նրանց բեղմնավորման ժամանակը և յերբ է սպասվում ծինը։

9) Բոլոր գոմերում պետք է լինի ներքին կանոններ (կերա-

ՀՍՍՀ-Ագրո ՍՍՌ
36737-62

ման ռեժիմ և աշխատանքի կարգապահությունը)։

10) Բոլոր գոմերում պետք է լինի հակահրդեհային ինվենտար և խստիվ արգելվում է գոմերում ծխելը։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՑԵՎ ԽՆԱՄՔԸ

1) Նախքան մսուրային շրջանը, բոլոր ֆերմաներում անասունները պետք է դասավորել ըստ խմբերի (ըստ ցեղի, հասակի, արտադրողականության ըստ կենդանի քաշի)։ Յուրաքանչյուր խումբ պետք է դասավորել գոմի առանձին մասում, միաժամանակ ցածր մթերատվությամբ անասուններին աշխատել բարձրացնելու նրանց մթերատվությունը։

2) Անասունների խնամքի լավացման և մթերատվության բարձրացման նպատակով ունենալ վորակով և մշտական անասնապահներ, վոչ պակաս 3 տարի ժամանակով և նրա աշխատանքից փոխելը կարող է միայն հողբաժնի համաձայնությունից հետո։

3) Բոլոր անասունները (յեզները, կովերը, հորթերը, ձիերը և այլն) թիմարել որական վոչ պակաս 3 անգամ խոզանակով և յուրաքանչյուր անասունի համար պետք է լինի առանձին խոզանակ և քերոց։

4) Աշխատանքի ժամանակ բոլոր յեզները պայտել իսկ ձիերին ամբողջ տարին անկախ նրա աշխատանքից։

5) Ցնտեսության մեջ նոր գընված խոշոր յեղջյուրավոր ամասուններին (ուրիշ շրջաններից) 21 որ պահել կարանտինի տակ, իսկ ձիերին և խոզերին 15 որ, հատկացնելով նեմաններին առանձին գոմեր ու արոտներ և դրանցը ընդհանուր հոսին խառնել անասնաբուժի գիտությամբ։

6) Կարանտինում գտնվող անասունների սպասարկող անձանձ չի թույլատրվում մտնել առողջ անասունների գոմերը։

7) Անասուններին գյուղի սահմաններից (շուկա, տոնավաճառ և ցուցահանդես տանող) դուրս տանելու դեպքում կոլտնտեսության վարչությունը, կոլտնտեսականները, մենատնտեսները և բանվոր ծառայողները պարտավոր են անասնաբուժից ստանալ վկայական այն մասին, վոր տրվյալ գյուղում չկա վարաքիչ հիվանդություններ։

8) Գյուղում հիվանդության դեպքեր նկատվելիս ամիջապես հայտնել անասնաբուժին և միևնույն ժամանակ առանձնացնել հիվանդներին և ախտահանել նրա կանգնած տեղը։

9) Սատկած անասուններին ամիջապես տեղափոխել անասնաբերեզմանոցը և բժշկի նայելուց հետո խորը թաղել։

10) Բոլոր ֆերմաներում ունենալ անասնաբուժական դեղարկղ դեղերը գործածելու կանոնների հետ միասին։

ՀՂԻ ԿՈՎԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Հղի կովերի խնամքը կազմակերպել այնպես, վորպեսզի ապահոված լինի կովերի նորմալ ծինը։ Կովերի ծննդաբերության սկսվելուց 1 ամիս առաջ առանձնացնել։ Գոմում պատրաստել հատուկ ծննդարան, վորը պետք է լինի լուսավոր, չոր, տաք և պաշտպանված լինի քամիներից։

ա) Ծնելուց 10—15 որ առաջ հղի կովին տեղափոխել ծննդարան, այդպիսին բացակայելու դեպքում գոմի մի մասը տախտակով կտրել և ծառայեցնել այդ նպատակի համար։

3) Ծննդարանում սահմանել տաք, ապահովերի կամ սանիտարների ցերեկային և գիշերային հերթապահություն։

3) Հղի կովերին որվա տաք յեղանակներին որական 2 ժամ հանել սղրոսանքի (նախիրից առանձին), սակայն ծնելուց 15 որ առաջ և 15 որ հետո զբոսանքի չթողնել։

4) Հղի կովերին կերակրել բացառապես լավորակ կերերով, խուսափելով բորվոսնած վիճած կերերից։

5) Ծննդաբերության ժամանակ կովերին ցույց տալ ոգնություն, սահմանելով խիստ մաքրություն և դժվարության դեպքում դիմել անասնաբուժին կամ բուժակին։

6) Հղի կովերին ծնելուց 2 ամիս առաջ սիլոսով չկերակրել, հակառակ դեպքում վիժում կառաջանա։

7) Ծնելուց 2 ամիս առաջ ծընող կովերին գոմում կապել առանձին առանձին և ըստայնմ կերակրել։

8) Հղի կովին կթելը պետք է դադարեցնել նրա ծնելուց 40—60 որ առաջ։

9) Ծնելուց ամիջապես հետո խմեցնել կես դույլ (վեդրո) գոլ ջուր խառնելով 0,5 կ. գր. աղ։ Յուրաքանչյուր ժամ հետո նրան տալ խոտ։

10) Նոր ծնված կովերին առնվազը 8-ից 10 որ պետք է տալ գոլ ջուր (35-36 աստիճան)։

11) Յուրաքանչյուր կովի ռացիոնի մեջ ավելացնել որական 30—35 գրամ աղ կամ անընդատ մսուրների մեջ ունենալ կոշտ աղ, վորպեսզի ցանկացած ժամանակ կարողանա ոգտագործել։

12) Բոլոր գոմերում ունենալ ծնի որացուցային պլան, թե վոր կովը յերբ է բեղմնավորվել և յերբ է սպասվում նրա ծինը։

ՄԱՏՂԱՇ ՀՈՐԹԲՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Ծնելուց ամիսվա՝ հետո փափուկ յեվ մաքուր շորով մաքրել հորթի դնչի և քթի լորձունքը, մաքուր սրբիչով դամ փափուկ խոտցվ սրբել մարմինը մինչև վերջնական չորացումը։

2) Նորածին հորթի պորտը կարելուց առաջ պետք է սեղմել և դուրս հանել պորտի մեջ յեղած այրունը, փորից ներքև 3—7 սանտիմետր յերկարությամբ կապել, ջրի մեջ յեռացրած, ամուր թելով և պորտը կտրել կապած տեղից մեկ ու կեսից յերկու և կես սանտի մետր ցածր յեվ յոդքսել կտրած տեղը։

3) Ծնելուց 2—3 ժամ հետո հորթին կերակրել, մոր խիժով և մատղաշներին մինչև 20 որական հասակը, որական կերակրել (ծծացնել) 3 անգամ։

4) Զի թուլատրվում մատղաշ անասուններին ծծեցնել կեղտոտ պտուկներից, այլ հարկավոր է նախորոք պտուկները լվանալ գոլ ջրով, չորացնել ապա ծծեցնել։

5) Հորթանոցը պահել չոր, լուսավոր, տաք, 12—15 աստիճան տաքությամբ, ողը մաքուր, խուսափելով սկվյաղնակներից (ողի հոսանքից)։

6) Ծնելուց ամիսաչա՝ հետո հորթին կշռել, վորից հետո կշռել պարբերաբար 15 որը մեկ անգամ, և համաձայն նրա քաշի ավելացնել նրա կերաբաժինը։

7) Մատղաշներին պետք է այն պես խնամել և պահպանել, վոր յուրաքանչյուր հորթ աճ տա որական 500—600 գրամ աճ։

8) Նորածին հորթերի համար պետք է պատրաստել վանդակներ 10—15 որ պահել այնտեղ, վորից հետո տանել հորթանոց։

9) Նորածին հորթերի համար չափազանց կարևոր և անհրաժեշտ է առաջին դալը (խիժը)։ Վորից կերակրել անհրաժեշտ քանակությամբ։

ա) Դալի մեջ գտնվում է այն պիսի սննդարար նյութեր, վոր կաթի մեջ չի լինում։

բ) Մաքրում են նորածին հորթի ստամոքսերի։

10) Հորթի տակը մաքրել 3-4 անգամ և արգելել կողմնակի մարդկանց մուտքը այնտեղ։

11) Ծնելուց հետո մաքուր շորով չորացնել հորթի դուչը, իսկ հիվանդությունից խուսափելու համար յուրաքանչյուր հորթի համար ունենալ մեկ սրբիչ ամեն որ հորթին մաքրել փափուկ խոզանակով, 10—15 որական հորթերին, տաք յեղանակներին դուրս բերել մաքուր ողի մեջ զբոսանքի և դրա տեվողությունը սկսած կես ժամից որական աստիճանաբար հասցնել 2 ժամի։

12) Հորթանոցում ունենալ ջերմաչափ։

13) Պատրաստել հիվանդ հորթերի համար մեկուսարան։ Նորածին հորթերի համար գործածել, վորպես ցամքար փափուկ ծղնոտ և վոչ թե փեյին։

14) Սննդարանում ունենալ ծննդաբերության հաշվառման մատյան վորտեղ գրանցել հորթի սկզբական քաշը, սեռը, ցեղը, դույնը անունը յեվ այլն։

ՀՂԻ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԾԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Հղի վոչխարներին և այծերին հատկացնել չոր և լուսավոր գոմեր, առանձնացնելով նրանց համար ծնարաններ։

2) Առանձնացնել և առանձին խնամք տանել հղի վոչխարների և այծերի նկատմամբ, կերակրել ամենա վորակյալ կերերով։

3) Արգելվում է հղի վոչխարների հետ միավանաբար գոմում պահել այծիր, վորովհետև շատ հաճախ այծերը հարվածում են հղի վոչխարներին, վորի հետև վանքով առաջ է գալիս վիժում։

4) Նորմալ և անկորուստ ծին ունենալու համար ծննդաբերության շրջանում սահմանել ցերեկային և գիշերային հերթապահություն։

5) Մսուրային շրջանում յուրաքանչյուր հասակավոր վոչխարին հատկացնել 0,8 0,9 քառ. մետր տարածություն գոմում, իսկ մատղաշներին 0,6 մինչև 0,7 քառ. մետր։

6) Հասակավոր վոչխարներին լոմի ջերմաստիճանը պետք է լինի 7—8 աստիճան, իսկ մատղաշ վոչխարներինը 10-12 աստիճան։

7) Ծնելուց 3—5—որ առաջ դի վոչխարներին տեղափոխել ծննդարան։

8) Հովիվների համար ունենալ գոգնոցներ, լվացարան, սրբիչ և սաբոն։

9) 1936 թ. շրջանի բոլոր ֆերմաներում անցկացնել վոչխարների յերկու խուզ։

10) Որական յուրաքանչյուր մեկ վոչխարին տալ 5—6 գրամ աղ կոշտ դրությամբ։

11) 10 որը մեկ անգամ հաշվի առնել զույգ ծնած վոչխարներին և հայտնել հողբաժնին, կազմակերպելով նրանց հատուկ ցուցակներ։

ՆՈՐԱԾԻՆ ԳԱՌՆԵՐԻ ՅԵՎ ՈՒԼԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1) Նորածին գառների քիթը և բերանը պետք է ամիսաչա՝ մաքրել լորձունքից և շորով կամ փափուկ ծղնոտով չորացնել մարմինը։

2) Հովիվը պարտավոր է հըսկել, վորպեսզի նորածին գառնը իսկույն յեվ յետ ստանան իրենց առաջին բաժին կաթը (դալը), վորն անհրաժեշտ է գառի ստամոքսը ու աղիքները մաքրելու համար և վոր գլխավորն է դալը իր մեջ պարունակում է մեծ քանակություն մանրադանյութեր, վորը մեծ նշանակություն ունի գառի հետագա աճման համար։

3) Գառը թողնել մոր հետ մի ասին, դնելով առանձին վանդակում 2 3 որ, վոր գառը յեվ մայրը ընտելանան իրար։

4) Ցիդիկապես թույլ գառներին պետք է անջատել ուժեղներից և տանել հատուկ խնամք։

5) Գառներին հատկացնել մաքուր, ընդարձակ, լուսավոր և տաք գառնանոցներ, փոխելով նրանց տակը փափուկ ցամքար։

6) Արգելվում է գառներին և վոչխարներին ջուր խմեցնել անձ, եվաջրային փոսերից, ճահիճներից և այլ կանգնած ջրերից։

7) Հիվանդությունն նկատելու դեպքում ամիջապես հիվանդը առանձնացնել առողջներից, տեղափոխել մեկուսարան, տեղը պատանել և դիմել անասնարուժին։

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ՑԵՐԿՈՒ ԾԻՆ ԿԱՂՄԱԿԵՐՊԵԼ

Մեկ տարում վոչխարների յերկու անգամ ծին կաղմակերպելը ունի խոշոր տնտեսական նշանակություն անասնապահության զարգացման գործում, վորի համար պետք է կաղմակերպել 35 թ. եկ գառների զարգանալ բեղմնավորում և Ապրիլի ֆեբրվարում 50 մայր վոչխար հունիսի մեջ բեղմնավորելու են։

ՀՂԻ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ԽՆԱՄԲԸ

1) Բոլոր հղի զամբիկներին ազատել ամեն տեսակի աշխատանքներից, ապահովելով նրանց խնամքի և կերակրման գործը նայելով 15 որ չաշխատացնել ծնելուց հետո։

2) Ծնելուց 2 ամիս առաջ զամբիկի պալտերը (նալերը) հանել, մաքրելու չգործածել դաշար։

3) Հղի զամբիկներին ծնելուց 15 որ առաջ տեղափոխել ծննդարան ասպանովելով/ցերիկային և դիշերային հերիատանությունը։

4) Մասրային շրջանում բոլոր հղի զամբիկներին ոգտագործելով բենդատ յեղանակներին, դուրս բերել գրոսանքի 2-4 ժամ խնամողների միջոցով, առանց ագատելու թողնել նուլնդի։ Ջուր տանելու թոկերից բռնել տանել և բերել։

ԾՆՈՒՄԸ ՑԵՎ ՄՏՐՈՒԿՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

1) Ծնելիս քուռակը թաղանդով է պատված, ամիջապես պատռել թաղանդը, այլապես նա կարող է խեղդվել։

2) Ծնելիս ոչկանուն չլինելու դեպքում ամիջապես գիժել առնասնաբուժին։

3) Անջատված ընկերքն ամիջապես հեռացնել գոմից և թաղել, իսկ զամբի մարմնի կեղտոտ մասերը լվանալ դալ ջրով։

4) Ծնելուց 2 ժամ հետո զամբիկին տալ կ՝ովհատրա կոլ ջուր. հետը խառնելով 500 գրամ թեփ կամ այլուր։

5) Նոր ծնած զաղբիկին 4.5 որ կերակրել բացառապես լավ վորակի խոտով և մարուկին մոր հետ տեղավորել առանձին կլետ կայում 2 ամիս։

6) Մարուկին ծծեցնել - ծնելուց 2 ժամ հետո և փորլուծ նը կատվելու դեպքում հայտնել անասնաբուժին։

7) Ծնելուց հետո զամբիկին 5—6 որ հետո թողնել գրոսանքի, իսկ արոտ կարելի յե թողնել 10 որից հետո։

8) Մարուկներին հատիկային կերերը կարելի յե տալ 2 ամսական հասակից հետո, այն իլլար թած վիճակում։

9) Վաղ գանան ցուրտ լեզանակներին մարուկներին չթուլատրել խոնավ գետնին պարկել, տեղավորելով չոր, մաքուր, լուսավոր և տաք գոմերում։

10) Մարուկներին անջատել մայրերից 5—7 ամսական հասակից վոչ շուտ։

11) Մարուկանոցը պետք է լինի չոր, լուսավոր, քամիներից պաշտպանված յեվ հատակը կավից, տակերը չորացնել փափուկ ծղնոտով։

12) Մարուկներին պետք է ամեն որ մաքրել խոզանակով և հաճախ սանրել։

ԳԱՇՈՂ ՈՒԺԻ ԽՆԱՄԲԸ

1) Գաշող ուժին պահել չոր լուսավոր և տաք գոմերում մաքրելով նրանց տակը որական 3 4 անգամ և գոմախոզը ամիջապես հեռացնել գոմից։

2) Որական 2 անգամ խոզանակով մաքրել և ամիսը մ՝կ անգամ ձմեռային սեզոնում տաք ջրով լեվ սապոնով լողացնել։

3) Փետրվարի մեկից ավելացնել քաշող ուժի կերի նորմանները, ջրել մաքուր յեվ թարմ ջրով, հիվանդությունների դեպք նկատելիս ամիջապես առանձնացնել հիվանդին և այդ մասին հայտնել անասնաբուժին։

4) Բանող կենդանիներին ճիշտ ոգտագործելու համար նրան ամրացնել հատուկ մարդկանց։

5) Բոլոր քաշող ուժի լծասարքը համարակալել և ամրացնել քաշող ուժին, թույլ չտալով փոփոխություններ կատարելու։

6) Բանող անասուններին շաբաթական մեկ անգամ հանգիստ տալ։

7) Գարանանացանի և բերքահավաքի նախորյակին տալ 15—20 որ հանգիստ, իսկ հուծվածներին մեկ ամիս։

8) Ձիերին հղիության 6-րդ ամսից ազատել ծանր աշխատանքներից, իսկ ծնելուց 2 ամիս առաջ և ծնելուց մեկ ամիս հետո բոլորովին ազատել աշխատանքից։

9) Արգելվում է քուռակներին մինչև լրիվ 3 տարեկան հասակը ոգտագործել։

ԿԵՐԱԿՐՏԱՆ ԿԱՐԳԸ

1) Կողմել յուրաքանչյուր կոլխոզի անասնակերի բալանս և խիստ հետևողականորեն ղեկավարվել նրանով։

2) Անասուններին կերակրել ներքին կարգ ու կանոններով սահմանված ժամերին։

3) Կերը տալու ժամանակ պետք է առաջին հերթին տալ կոպիտ կեր (խոտ և դտրման,) հետո խտացած կեր, ապա վերջում նուրբալի կեր իսկ ձիերին խտացրած կեր տալ ջրելուց հետո։

4) յուրաքանչյուր խոշոր յեղջրավոր անասունին տալ որակյան 35—40 գրամ աղ, ավելի լավ է այդ աղը խոշոր կտորներով դնել մսուրը, վորպեսզի անասունը ցանկացած ժամանակ կարողանա լիզել։

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՈՒ ՆԱԽՐԱԳՆԱՑ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

1) Բոլոր արոտավայրերը նախքան անասուններին այնտեղ քշելը մաքրել դիակներից, քարերից, վոսկորների մնացորդներից և այլ սուր իրերից, ժամկետ ապրիլի 20 — ից մայիսի 20—ը։

2) Տնտեսության ունեցած արոտատեղերը պետք է բաժանել նախիրների վրա, ոգտագործել հերթականությամբ և ամենալավ ու մոտիկ արոտատեղերը հատկացնել կաթնատուներին, հղիներին (հղիության վերջին շրջանում) մատղաշներին և արտադրողներին։

3) Անասուններին նախքան արոտ հանելը լիովին թարկել անասնաժուժական քննության։

4) Առանձնացնել հիվանդ և կասկածելի անասուններին և տանել նրանց մեկուսարան, պահելով այնտեղ մինչև նրանց առողջանալը։

5) Սղոցել հարու (խմող) արվողների յեղջյուրների սուր ծայրերը։

6) Բոլոր անասուններին պետք է բաժանել ըստ արտադրանքի (կթու, սուրա, բանող յեվ այլն)։

7) Ինկատի ունենալով, անասունների կաշվին հասցրած բուռերի վնասը—նրանց վոչնչացումը սկսել 25—ը Մարտի մինչև Ոգոստոսի վերջը։

8) Գյուղերում և արոտներում ունենալ անասնաբերեզմանոցներ և անասունների մուրքը այնտեղ արքելել։

9) Անասուններին ճիվալին հիվանդություններից զերծ պահելու համար կազմակերպել ճահիճների մեկյորացիա։

10) Մսուրալին շրջանից արոտալինին անցնելը պետք է կատարել աստիճանաբար (10—12 որվա ընթացքում)։ Առաջին որը դուրս թողնել 2—3 ժամով արոտում մնալու ժամանակամիջոցում ավելացնել մինչև 4 ու կես ժամով, այդ ժամանակամիջոցին պետք է լրացուցիչ կոպիտ կեր տալ վորի քանակը աստիճանաբար պակասեցնել։

ԼԱՎ ՎՈՐԱԿ ԿԱԹ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1) Յուրաքանչյուր կթվորներին յենթարկել բժշկական քննության ապա նոր թուլատրել կթելու, թույլ չտալ հիվանդ կանանց կով և վոչխար կթելու։

2) Կթելու ժամանակ կաթի առաջին կաթիլները կթել առանձին ամանի մեջ և թափել դոմից դուրս ապա նոր կթել ամանի մեջ։

3) Դոմերում ունենալ լվացարան, սապոն, ձեռքի և ափսեների մաքրման համար սրբիչներ, իսկ կթողների համար նույնպես թոռներ։

4) Կթելուց առաջ կթողը մաքուր պետք է լվանա իր ձեռքերը և յեղունկները պետք է մաքուր կտրված լինի։ Կաթը ամպայման պետք է քամել, կիթը վերջացնելուց հետո կաթը դոմից հեռացնել և կաթնամանները լվանալ սղկսրից դուրս ջրով ապա յեռացրած ջրով և չորացնել։

5) Խստիվ արգելվում է կթելու ժամանակ ազմկել, փոշի բարձրացնել և կեր տալ կթողների համար ձեռք բերել խալաթներ 5 որը մեկ անգամ լվանա։

6) Բոլոր նոր ծնած կովերի կաթը ծնման որից հաշվի առնել առանձին-առանձին, թե յուրաքանչյուր կով ի՞նչպես յերեկոյան այնպես ել առավոտյան քանի լիտր կաթ է տալիս։

ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1) Կենդանիների զուգավորումը կատարելիս, զեկավարվել Հողբաժնի տված պլանով։

2) Բոլոր ֆերմաներում անցկացնել կովերի պարտադիր ձեռնաքաշ զուգավորումը։

3) Մայրական կազմը լրիվ կերպով և ժամանակին ծածկելու համար տնտեսությունը պետք է ունենա—

ա) Ձեռնաքաշի ժամանակ 50 60 կովին մեկ արտադրող

բ) 30—40 գանրիկին մեկ հովատակ

գ) 50—80 մաքուն մեկ խոյ (դուչ)։

դ) 20—25 մերունին մեկ վարազ։

4) Կոլտնտեսականների և մենտնտեսների նախիրներին ապահովելու համար պետք է յուրաքանչյուր գյուղում կազմակերպել զուգավորման կետեր մայրական ամբողջ կազմը ծածկելու համար։

5) Թուլատրվում է զուգավորել—

ա) Զամբիկներին 3 տարեկան հասակում

բ) Հովատակներն 2—25 տարեկան հասակից

գ) Եզ մոզիներ 2-2 ու կես տարեկան նայած նրանց տոհմային և ցեղական հատկություններին։ Իսկ ցուլիկներին 2 տարեկան հասակից

դ) Վարազներին 9 12 ամսականից հասակից

յե) Ոչխարին մեկ ու կեսից 2 տարեկանից.

զ) Եզ գառներին մեկ տարեկանից։

6) Բրուցելյոզով (վարակիչ վիժում) հիվանդ մայրերին պետք է պահել բոլորովին առանձին նախիրներով և ծածկել առանձին արտադրողով միայն նրանց առողջությունը պարզելուց հետո—իսկ վիժված կովերին թուլատրվում է ծածկել 2 ամսից հետո։ Ընդերքը և նրանցից արտադրված արտադրությունները հավաքել լեվ այրել։

7) Զուգավորման կամբանիայից մեկ ու կեսից 2 ամիս առաջ պետք է բոլոր արտադրողներին ու մայրերին, վորոնք յեն թակային զուգավորման կերակրել լավ կերերով, մանավանդ զուգավորման մոմենտին պետք է տալ կոպիտ և խտացրած կերը (քուսպ, հունդ, և գարի)։

8) Զուգավորված կենդանիների գրանցումը պետք է կատարել ծածկելու մոմենտին։

9) Ուժեղացնել հղի անասունների հսկողությունը վիժումներից խուսափելու համար, չպետք է ջրել սառը ջրով, չտալ նրանց փթած կերեր և գզուշանալ մեխանիկական հարվածներից։

10) Մնելուց մեկու կեսից 2 ամիս առաջ պետք է հղի կովերին ցամաքացնել։

11) Մատղաշների գոմերը պետք է մաքրել և ցամաքը փոխել 2—3 անգամ որակաև։

ՄԵՏԻՉԱՑԻԱ

Անասունների վորակը բարելավելու և նրանց վորակը բանձրացնելու նպատակով մեր շրջանում, վորպես գլանային ցեղ ընդունված են խաչոր յեղջրավոր անասունների համար Շվից ցեղը, վոչխարների համար Կարակուլ ցեղը։ Յեվնելով այս կարեվոր խնդրից խստիվ արգելվում է ցեղական արտադրողներն առանց Հողբաժնի թույլատվության վաճառելը, մորթելը և տրամադրել քաղաք ուժին։ Տանել հատուկ խնամք ցեղական ցուլերի նկատմամբ և նրանց նկատմամբ կիրառել ռացիոնալ կերակրում։

Կոլտնտեսները ֆերմաների համար ցեղական արտադրողներ ձեռք բերելու նպատակով պետք է ձեռք բերեն միայն նշված գլանային ցեղերից։

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1) Յուրաքանչյուր կոլխոզում ունենալ հիվանդ անասունների համար մեկուսարան, ֆերմայի, շենքերից 150—200 մետր հեռավորության վրա։

2) Հիվանդության գեպքեր նը կատվելիս հիվանդ անասուններին տեղափոխել մերկուսարանը և այդ մասին ամիջապես հայտնել անասնաբուժին կամ բուժակին։

3) Հիվանդ և վարակիչ հիվանդություն բռնկված անասունների խնամքը պետք է տանել առանձին, ինչպես նայեվ պետք է առանձին լինի նրանց կերի և ջրելու տեղը։ Արգելել կողմնակի մարդկանց մուտքը հիվանդների մոտ։

4) Վարակիչ հիվանդությունների գեպքում (սիբիրախտ, սոր տակ փորված ճիճվորին հիվանդ և այլն) զոմախպն այրել։

5) Հիվանդ կենդանիներին սպասարկելու համար առանձնացնել հատուկ աշխատողներ և չը թուլատրել նմաններին խնամել նայեվ առողջ անասուններին։

6) Բոլոր գյուղերում 36 թ. ընթացքում ունենալ անասնաբգիրեվմանացներ և ունենալ բոլոր ֆերմաներում անասնաբուժական գեղարվեստ (ապտեկա)։

ԽՈՏՀՈՒՆՁ

1) Վորպեսզի խոտը չփչանա և խոտի մեջ յեղած սննդանյութերի քանակը մինչև 39 տոկ. բարձրանա, դրա համար խոտհունձը կատարել վաղ և սերմա կալման ժամանակ։

ա) Յերբ խոտակազմի մեջ դի բակշռում է խրփուկը, սեղեջը (հացազգիներին պատկանող խոտերը), այդ դեպքում խոտհունձը սկսել տվյալ տեսակի խոտերի հասկերը արձակելու ընթացքում այն հաշվով, հունձը ավարտվի նրանց ծաղկման վերջում։

բ) Խոտակազմի մեջ) վեյրի վիկայի, դուլլի) լոբազգիներին պատկանող խոտերի գերակշռման դեպքում խոտհունձը սկսել այդ խոտերի կոկոնակալման վերջում (ծաղկման 50 տոկ. ժամանակաշրջանում) և ավարտել նրանց ծաղկման վերջում։

ԱՌՎՈՒՅՏ—(ՅՈՆՋԱ)

1) Առվույտի կերային արժեքը բարձր պահելու համար, հնձել ծախկելու առաջին շրջանին այն հաշվով, որ դաշտը ամբողջովին ծածկված լինի քաղի վերջում ծաղկով։

2) Յեթե առվույտի ցանքի տարածությունը շատ մեծ է խոտաքաղը պետք է սկսել այն ժամանակ, յերբ ծաղկել է նրա 10 տոկ. իսկ յեթե քիչ է այն ժամանակ յերբ ծաղկել է արդեն նրա 20 տոկ., ուշացնելու դեպքում տերևները կթափվեն և ցողունները կկոշտանա, կստացվի սննդանյութերի զգալի կորուստ։

ՍԻԼՈՍԱՑՈՒՄ

Սիլոսը կարելի յե պատրաստել ճահճային խոտերից, բոստաններիմնացորդներից և այգիների խոտերից, բոլոր վայրի բուսերից վորը դառնում է պիտանի կեր կենդանիների համար և բարձրացնում է կովերի կաթնատվությունը։

ԽՈՏԻ ՊԱՀԵԼԸ (ԴԻԶԵԼ)

Խոտը դաշտից տուն տեղափոխելիս պետք է լուրջ ուշադրություն դառնել նրա պահպանման վրա։

1) Դեզերի տեղը պետք է ընտրել այնպիսի տեղ, վորտեղ հողը քիչ խոնավություն է պարունակում [illegible]

ստորգետնյա ջրերից։

2) Դիզելիս տեղի տակը փռել դարմանկամ հին խոտ (չոր)

3) Դիզման աշխատանքները սկսել առավոտյան այնպիսի ժամանակ յերբ ցողը վերացել է և վերջացնել յերբ արեվը մայր է մտնում, իսկ ցերեկվա շոր ժամին դատարկեցնել դիզելը, վորպեսզի ծաղիկները չթափվեն։

4) Դեզերը պատրաստել յերկարաձեվ (սկիրտաձեվ) և հրդեհից պաշտպանելու համար դնել իրարից 30—40 մետր հեռավորության վրա։ Դեզի արտաքին մասում չպետք է լինի խորտուբորթություններ, վորպեսզի անձրևավոլորները չանցնեն դեզի մեջ։

5) Վորպեսզի հնձած խոտի սննդանյութերի կորուստ չլինի խոտը չթողնել անձրևների տակ հավաքել այն ժամանակ յերբ խոնավությունը 25 տոկ. բարձր չն և չորացնել այնքան, վոր ձեռքով խփելիս չփշրվի նրա ծաղիկները և քնքուշ մասերը ուժեղ չթափվի։

6) Ըստ կլիմայական, հողային և ռելեֆային պայմանների խոտհունձի համար շրջանը բաժանել 3 գոտիների 1 գոտուային մաս, 2 Զանգեզուրի գաշտ, 3 Միջի գարա և Ջրին գարա։

ա) Առաջին գոտում խոտհունձը ավարտել 8 որվա ընթացքում, 2-րդ գոտում 10 որվա ընդացքում, 3-րդ գոտում 12 որվա ընդացքում։

7) Խոտը մաքուր հնձելու և բերքը 8—15 տոկ. բարձրացնելու համար հնձել հողի մակերեսից 2-3 սանտիմետր վորն բարձր։

8) Խոտհունձը արագ յեվ վորակով կատարելու համար տեղերում յեղած խոտհունձ մեքենաները և ձիափոցիները գործի դնել։ Սահմանել խոտհունձ մեքենաների որական հնձման բեռնվածությունը 3 հեկ. իսկ ձիափոցիների համար 5 հեկ.

Սահմանել խոտհունձ մեքենայի համար տարեկան հնձման բեռնվածությունը 50 հեկտար իսկ ձիափոցիների համար 70 հեկ.։

9) Հնձած խոտը հավաքել առավոտյան յեվ յերեկոյան, վորպեսզի խոտի ծաղիկները և տերևները չթափվեն։

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ

1) Գանի, վոր արոտների ատցիոնալ ոգտագործումը բարձրացնում է նրանց բերքատվությունը մինչև 20 տոկ., ապա բոլոր ամառային արոտավայրերում անցկացնել արոտների հերթական ոգտագործումը շրջանի մասնագետների ցուցումներով։ Չի թույլատրվում այդ կարգը խախտել կամ նշված ժամկետից

ուշ կամ շուտ տեղափոխել անասուններին, մի արոտամասից մի ուրիշ արոտամաս։

2) Ցեն թալեռնային արոտներում թույլատրել անասուններին արածացումը, յերբ այդտեղ խոտը բարձրացել է 9—10 ս. մետր, իսկ լեռնային ավելի բարձր տրոտավայրերում յերբ բարձրացել է 5—6 ս. մետր և հողը չորացել է. արգելել բոլոր արոտավայրերում վաղ գարնան արածացնելը։

3) Վորպեսզի արոտներում առաջ չգան կոչտեր, խորտուփորդությունններ, դրա համար արգելել անձրևային յեվ մարախ լապատ որերին թեք լանջերին արածացնելը։

4) Անասունների վորակավոր մաքուր ջրով բավարարելու համար գոհությունն ունեցող բոլոր ջրամբարները (գոլ'երը) ու աղբյուրները մաքրել ու վերանորոգել, ժամկետ Մայիսի 20—ը։

5) Անասուններին չբելու վայրերում և դրա շրջակայքում արոտավայրերն ավելորդ չտրորելու և անոգտագործելի չդառնելու համար, ջուրը տարվող անասուններին թույլ չտալ հիմնական ճանապարից ցրվելու։

6) Վորպեսզի ձյունի տակ մընացող մատաղ ծիլերը հաջորդ տարին լավ բերք տա և չկառչեն, արգելել արոտավայրերի արածացնելը ուժեղ ցրտերն ընկնելուց 12—15 որ առաջ։

ԽՈՏՀԱՐԻՆԵՐՈՒՄ

1) Վորպեսզի խոտհարքների բերքը պաշտպանած և յել ավելի բարձրացված լինեն բերքատվությունը-արգելել բոլոր խոտհարքներում գարնանը անասուններին արածացնելը։

2) Խոտհարքների հաջորդ տարվա բերքը բարձրացնելու նպատակով, թույլատրել անասուններին արածացնելը միայն խոտհարքի հնձելուց 21 որ հետո և արգելել արածացնել սպանանիքները սկսվելուց 15 որ առաջ։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1) Կազմակերպել բանող կենդանիների ճիշտ ոգտագործումը։

ա) Ձիերին և յեղներին բաժանել ըստ խմբերի և սահմանել արտադրանքի նորմաները ըստ աշխատանքի տեսակների։

2) Ձիապահը ձիերին ունդուներլիս պետք է լավ գնի հարվածի տեղ կամ հիվանդ չի ձին, վորի համար նա պետք է հայտնի բրիգադիրին անասնաբուժին կանչելու համար։

3) Բանող կենդանիներին շաբաթվա մեջ 1 որ հանգիստ տալ նախքան գարնանացանի սկսվելը, վորից հետո պետք է տալ 10—15 որ հանգիստ, իսկ հյուծվածներին 20—30 որ։

4) Զուգավորման շրջանում արտադրող հովատակներին արգելվում է աշխատացնել, վորոնք ընդունված են զուգավորմանը մասնակցելու համար։

5) Արգելվում է վորյեվե աշխատանքի համար ոգտագործել մատղաշներին մինչև 3 տարեկան հասակը։

6) Ցերորդ տարվա ձմեռը մբարուկը պետք է վարժված լինի վորից յետո պետք է ոգտագործել թեթեվ բեռներ տանելու համար։

ՄԵՂՎԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

1) Ձմռան վերջին յեվ գարնան սկզբներին, յերբ դեռ մեղուները գտնվում են ձմեռանոցում, պետք է ուժեղ հսկողություն սահմանել ոգտագործել ձմեռանոցի համար սարքավորված ոդափոխության համար բոլոր հնարավորությունները։

2) Մեղուները ձմրանոցից նախքան դուրս դնելը պետք է կատարել մեղվանոցի տեղի ընտրություն և մաքրել այն։ Մեղվանոցի տեղը պետք է լինի չոր, քամիներից պաշտպանված, աղմուկից, մեծ ջրերից, ճահիճներից հեռու և յերկարատև շոգերից պաշտպանված։

3) Մեղուները ձմեռանոցից պետք է դուրս դնել յերբ դրսում արեվ է ձյուն չկա և յերեկոները ջերմաստիճանը հասնում է 10—13 ի։ Դուրս դնելու աշխատանքը պետք է կատարել լավ պարզ յեղանակներին այն հաշվով, վոր աշխատանքը վերջանա առավոտյան ժամը 9—ին։

4) Այս կանոնից բացառություն կազմել և մեղուները ձմեռանոցից դուրս դնել այն դեպքում յերբ առաջին կետում ցույց տրված ոդափոխության բոլոր միջոցները գործածելուց հետո ձմեռանոցում մեղուները դարձյալ անհանգիստ են։

5) Դուրս դնելուց հետո մեղվանոցում պետք է կատարել ընտանիքների արտաքին թռուցիկ ստուգում և ապա հատակների մաքրում։

6) Մեղվանոցից դուրս դրած ընտանիքները յերբ մաքրման թռիչքը վերջացնում են պետք է կատարել տաքացումների լրացում, հանել այն շրջանակները վորոնց վրա մեղու չի պտտվում, բունը սեղմել կենտրոնում յեվ 2 կողմերից տալ տաքացումներ։

36737-62

7) Այն մեղվանոցները վորոնք ջրերից հեռու յեն, պետք է մեղվանոցում դնել ջրի ծորակներ։

8) Հատակները մաքրելու աշխատանքները վերջացնելուց հետո որվա տաք յեղանակներին պետք է կատարել ընտանիքների ներսի գլխավոր ստուգում։ Հայտնաբերված անմայր ընտանիքներին պետք է տալ պահեստի մայրեր, այդպիսին չլինելու դեպքում միացնել մայր ունեցող թույլ ընտանիքների մեկի հետ։ Իսկ կերապակաս ընտանիքներին պետք է տալ շրջանակով կնքված մեղրը։ Ստուգման ընդացքում պետք է մաքրել ընտանիքում յեղած մոմի կտորները, վերցնել բնում յեղած սեվացած, անպետք, անգույն, գործած չեչերը։

9) Կերապակաս ընտանիքի պաշարի լրացումը կատարել շաքարի միջոցով։ Շաքարալուծը պետք է տալ քարցը վիճակում (2 բաժին շաքար մեկ բաժին ջուր) այնել մեծ բաժակներով 800 գրամից մինչև 1000 գրամ մեկանգամից։

10) Ամբողջ սեղոնի ընդացքում պետք է պայքարել մեղուների միջոցով առաջացած զոդությունների դեմ։

11) Պետք է բարբերաբար հսկողություն ունենալ մեղվանոցում, վորպես պահանջված ժամանակին ընտանիքի քունը համապատասխան չափով լայնացվի լրացուցիչ չեչեր տալու միջոցով։ Չեչերը ամիչապես բնի կենտրոնում տալ չի թույլատրվում։ Յ տարուց ավելի գործածված հին սեվացած չեչերը չպետք է ոգտագործել։

12) Անկանոն բռուաչեչերի (ան պետքմնացորդ) խուսափելու նը պատակով մոմաթերթերը փակցնել ամպայման լարով պատած շրջանակների վրա։

13) Մեղվանոցում չպահել 2 տարեկանից բարձր հասակ ունեցող մայրեր։

14) Պայքարել բնական ձագտության և ձագատենտի դեմ։

15) Մեղվի ընտանիքների բազմացումը կատարել արհեստական ձագեր վերցնելու միջոցով, ձագերը վերցնել մեղվաբերքից 20 - 30 որ առաջ։

16) Արհեստական մայրաբծության և բռուաբծության աշխատանքները պետք է ձեռնարկել այն հաշվով, վոր մեղվաբերքից 20—30 որ առաջ հնարավոր լինի ունենալ բեղմնավորված մայրեր։

17) Մեղվանոցում պետք է ունենալ լվացարան, ոճառ, և սրբիչ, մեղվապահը պարտադիր կարգով աշխատանքից առաջ և հետո պետք է ձեռքերը մաքուր լվանա և ձեռքի գրպանները ախտահանի։

18) Մեղվանոցում հիվանդ ընտանիքներին նայելուց հետո, նախքան առողջ ընտանիքներին անցնելը պետք է, ձեռքերը լվանալ ապա ախտահանել սուլեյմանի լուծույթով։

19) Հայտնաբերված բոլոր հիվանդ ընտանիքները պետք է բուժել նույն սեզոնի ընդացքում։ Թափ տալու աշխատանքները պետք է կատարել մոմաթերթերի կառուցողական շրջանում։

20) Մեղվանոցի գույքը պետք է կանոնավոր դասավորել. մեղվանոցին կից հատուկ շենքերում, վորոնք չպետք է ունենան այն պիսի անցքեր, վորով հնարավորություն տան մեղուներին ներս խուժելու։

21) Մեղրը քամել այպնիսի շենքում վորտեղ մեղուները ներս մտնելու հնարավորություն չունենան։

22) Մեղվանոցները պետք է ունենան մեղվանոցային տետր, վորտեղ յուրաքանչյուր ընտանիքին հատկացվելու է մեկ էջ։ Այդ էջում պետք է գրանցել տվյալ ընտանիքին վերաբերվող բոլոր դիտողությունները։

23) Մեղվանոցում պետք է ունենալ 10 յերորդական կշեռք, վորի վրա գրվելու յե մեղվանոցի ամենա ուժեղ և աչքի ընկնող ընտանիքներից մեկը, նույն պես պետք է ունենալ արեվի մոմանախ։

24) Մեղվանոցը պետք է ունենա դիտողությունների տետր կամ որագիր։ Վորի մեջ գրվելու է որվա կլիմայական դիտողությունները, Փոփոխությունը և կղանափեթակի վերաբերյալ տեղեկություններ։

25) Վարակված յեվ կասկածելի գույքը պետք է ամիչապես ախտահանել, իսկ ցեցից պաշտպանելու համար պետք է նախապես նրանց վրա ցանել նավթալին ապա դասավորել կորպուսների մեջ, իսկ կորպուսները մեկ մեկու վրա սյունաձեվ և անցքերը փակել մկներից պաշտպանվելու համար։ Այն շենքերը վորտեղ դասավորվում են պատրաստի չեչեր, նախորոք շենքը պետք է ախտահանել։

26) Մեղվի բոլոր ընտանիքների աշնանը—Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսներին պետք է ունենան 7—ից 8 շրջանակ պրտող մեղու 16 կ. գր. պաշարով։

27) Վորպես անձեռնամխելի ֆոնտ հաջորդ տարվա համար պետք է պահել յուրաքանչյուր ընտանիքի համար մեկ շրջանակ լիքը կնքված մեղրով։

28) Յուրաքանչյուր մեղվանոց ձմեռանոց պիտի տանի ձմեռը ընտանիքների քանակի առնվազը 15 տոկ. չափով պահեստի մայրեր։

29) Մեղուները ձմեռանոց գը նալուց առաջ ընտանիքների բնի միջից պետք է հանել դատարկ

և կիսաերդած շրջանակները, ապա նոր դատարկ տաքացում ներ ու լրացումներ։

30) Այն շենքերը վարոնցում ձմեռելու լեն մեղուները նախապես հարմարացնել ձմեռանոցի նորմալ պահանջներին, շենքը պետք է լինի չոր, և ամրկից հեռու, տանիքը և պատերը ավարված ոդափոխության հարմարեցված, ներսը մաքրված հարիվան շենքերի ծխից պաշտպանված։

Ձմեռանոցի շենքի ներսի բարձրությունը պետք է լինի սովորականից վոչ բարձր։

31) Մեղուները նախքան ձմեռանոց դնալը մեկ ամիս առաջ պետք է ախտահանել շենքը ծրծումբի ծխով, ախտահանման ժամանակ շենքից պետք է հեռացնել մեղադեղ բոլոր պիտույքները, ձեռք առնելով հակահրդեհային բոլոր միջոցները։ Ծածկել շենքում յեղած բոլոր մկների անցքերը։

32) Ախտահանված ձմեռանոցը պետք է ախտահանելուց հետո 24—26 ժամ փակ պահել։ Ապա բաց անել դռները և լուսամուտները կատարել ոդափոխություն 24—28 ժամ։

33) Ձմեռանոցում մեղուները պետք է դասավորել հատակից 25 ս. մ. բարձր, պատերից 50 ս մ. հեռու, իսկ շարքերը պետք է դասավորել 3 ընտանիքից վոչ բարձր իրար վրա և շարքը շարքից 60 ս. մ. հեռու, վորպեսզի հնարավոր լինի միջանցքներից ազատ շարժվել ձմեռանոցում։

34) Ձմեռանոցում նորմալ ջերմություն պիտի պահպանել 4-6 աստիճան ըստ ցելսուսի։ Բացի թողնել բոլոր ընտանիքների աբգանոցները, ձմեռանոցում ամենի լույսը խիստ արգելվում է։

35) Ձմեռանոցում մեղուներին թարմ լեվ խոնավ ոդով ապահովելու համար սենյակում պետք է ունենալ մեկ փեղրո ջուր և 10 որը մեկ անգամ փոխել ջուրը։

36) Մեղուները ձմեռանոց գնանված որվանից մինչև դուրս դնելը կատարել ջերմաստիճանի չափումներ և գրանցել հատուկ տետրի մեջ։

37) Ձմեռանոցի մոտ դրսում կախել մի ջերմաչափ ստվերի տեղ, վորը պաշտպանված լինի ձյունից և քամիներից. գրանցել նույնպես ջերմաչափի չափումները նույն տետրում։

38) Ձմեռանոցի ջերմաչափի չափումը և ատուգումները պետք է կատարել մինչև հունիսի 30-ը 10 որյակներով, իսկ մինչև փետրվարի 25—ը 5 որյակներով նրանից հետո մինչև դուրս գընելը ամեն որ։

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեղվի ընտանիքների մեջ տարածված հիվանդությունների մասնավորապես փեթակի դեմ պայքարելու, վաղակը ընում խեղդելու, չտարածելու և նրան իսպառ վերացնելու համար կիրառել հետեվյալ միջոցառումները։

1) Կազմակերպել տեղերում հակափեթաղիտային բրիգադներ վարոնց միջոցով ստուգել շրջանի բոլոր գյուղերի մեղվի ընտանիքները, հիվանդներին հայտնաբերելու, նրանց պարտադիր կարգով բուժելու և ինվենտարի ախտահանում կատարելու համար։

2) Հարկադրել մեղվատերին լրիվ կիրառել սույն թվի պարտադիր Զոովետ կանոնները ժամանակին հայտնաբերելու հիվանդ մեղվի ընտանիքներին նրանց մասին ամիսապես հայտնել Հողբաժնի անասնապահական սեկտորին։

3) Շրջանի սահմաններում և նրանցից դուրս արգելել մեղվի ընտանիքների ամեն տեսակի տեղափոխում։ Արգելել հին չախտահանված դատարկ փեթակների և այլ մեղվաբուծական ինվենտարի առու ծաղալ յեվ փոխադրությունը։

4) Ծանոթություն. — Մեղվի ընտանիքների տեղափոխությունը թույլատրվում է Շրջ. Հողբաժնի մեղվաբուծի յեվ անասնաբուժական պերսոնալի գիտությամբ ու թույլատվությամբ. նրանց կողմից տրված առողջապահության հատուկ վկայականով։

4) Արգելել հին դատարկ արկղների և նրա մասերի շրջանակների և այլ մեղվաբուծական ինվենտարի դրսում կամ մեղուների մատչելի տեղում տեղավորելը։

5) Բոլոր միջոցներով կանխել դողությունը մեղուների կողմից։

6) Արգելել մեղուներին փեթակից դուրս և բացոթյա կերակրելը։

7) Պարտադիր կերպով այրել բոլոր սատկած մեղուներին և փեթակի հատակին թափված լեղաները։

8) Պարտադիր կարգով ախտահանել գործածության մեջ յեղած բոլոր փեթակները և նրանց մասերը, մեղվաբուծական վոչ ինվենտարը և հիվանդ մեղվի ընտանիքի տեղը։

Ծանոթություն. Պարտավորեցնել գյուղխորհուրդներին և կոլխոզ վարչություններին սույն պարտադիր վորոշումը լույս տեսնելուց հետո մեղվապահների ընդհանուր ժողովում ամիսապես ընտրել մեղվաբուծական հակափեթախային բրիգադներ։

Մեղվաբուծ բրիգադների թիվը սահմանել մեղվաբուծների ընդհանուր ժողովում յեղնելով տեղի լեվ մեղվի ընտանիքների քանակից ու տեղական պայմաններից,

սակայն այն հաշվով, որ լուրաքանչյուր գյուղ ունենա 3 ից վոչ պակաս բրիգադային կազմ։

9) Մեղվաբուծ բրիգադներում պարտավորեցնել հաշվի առնել իր գյուղի մեղուների ընդհանուր ընտանիքների թիվը և պարբերաբար ստուգել նրանց հիվանդներին հայտնաբերելու և բուժելու։

10) Ամիջապես գյուղխորհուրդներին հայտնել հիվանդությունները ծածկողներին և սույն վորոշման վորևէ և կամ խախտող մեղվատերերի անուն և ազգանունը։

11) Ոգնել բրիգադներին մեղվաբուծական հրահանգչին և անասնաբուժական պերսոնալին բուժման յեվ ախտահանման ընթացքում կատարելու նրանց բոլոր որինական պահանջները, նրանց բացակայության դեպքում հողբաժնի մեղվաբուծի և անասնաբուժական պերսոնալի միջոցով և նրանց ցուցմունքներով կազմակերպել հիվանդ ընտանիքների բուժումը։

12) Թույլ չտալ ուրիշ շրջաններից մեր շրջանի տերիտորիայի կայարաններում իջեցնելու մեղուներ առանց հողբաժնի գիտության։

Վերոհիշյալ պարտադիր վորոշումը խախտողները կենթարկվեն դրամական տուժի 5-50 ռ. սահմաններում, կամ հարկադիր աշխատանքի 5—15 որ ժամանակով, իսկ ակնհայտ և չարամտորեն խախտողները կենթարկվեն դատական պատասխանատվության։ Սույն պարտադիր վորոշման կիրառման հսկողությունը դնել Հողբաժնի, Մ. Տ. Կայանի, Միլիցիայի և գյուղխորհրդի վրա։ Սույն վորոշումը տարածվում է անասնապահությամբ զբաղվող բոլոր տնտեսությունների վրա։

Սույն պարտադիր վորոշումը ուժի մեջ է հրատարակման որվանից սկսած մեկ տարի ժամանակով։

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀ
Հ. ԱԲԴՈՒԼԼԱՅԵՎ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Մ. ԲԱՇԻՐՈՎ

ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Ս. Մաշտոցի անվան Ձեռագրատուն

709

Q 1/2

21.569